ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային ապրանքների,
ՀՀ զինանշանների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված
«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«28» հոկտեմբերի 2026թ. Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Կարեն Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ԲԵԼԼԵ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

ԲԵԼԼԵ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը որոշեց.

ԲԵԼԼԵ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) 22-րդ չափաբաժնի մասով մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգը 18-րդ, 26-րդ, 28-րդ, 30-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 49-րդ և 50-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 39-րդ չափաբաժինների մասով Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 27-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ չափաբաժինների մասով «Կոմուս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 19-րդ, 20-րդ չափաբաժինների մասով Դավիթ Քոչարյան ԱՁ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 22-րդ չափաբաժնի մասով ԲԵԼԼԵ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին, 2-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 44-րդ, 45-րդ չափաբաժինների մասով Համակարգի կողմից մերժված չհամարված մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2. 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 12-րդ, 16-րդ, 18-րդ, 26-րդ, 28-րդ, 30-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 46-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ չափաբաժինների մասով այն մասնակիցների հայտերը, ում կողմից աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով գնման ընթացակարգը 18-րդ, 26-րդ, 28-րդ, 30-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 49-րդ և 50-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Անդրանիկ Աբգարյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Կարեն Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան